Հաստատում եմ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

գիտության գծով պրոռեկտոր Պ. Ավետիսյան

«13» փետրվարի 2023թ.

ԿԱՐԾԻՔ

(առաջատար կազմակերպության)

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Անժելա Սուրենի Մնացականյանի «ՀՀ արտաքին ռազմական քաղաքականությունն անվտանգության ապահովման համատեքստում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

*Հաստատվել է*

*Հայ-Ռուսական համալսարանի «Քաղաքագիտություն» ամբիոնի 2023թ փետրվարի 13-ի նիստում: Նիստում մասնակցում էին քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Փ. Ենգոյանը, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Ս. Դավթյանը, փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ Հ.Լ. Մարգսյանը, քաղ. գիտ. թեկնածու Ն.Ա. Դունամալյանը, քաղ. գիտ. թեկնածու Ս.Ս. Շիրխանյանը, ավագ դասախոս Մ.Լ. Հարությունյանը, դասախոսներ Ն.Ի.Մարգարյանը, Ի.Ա. Քարամյանը:*

Անժելա Սուրենի Մնացականյանի «ՀՀ արտաքին ռազմական քաղաքականությունն անվտանգության ապահովման համատեքստում» թեմայով ատենախոսությունը արդիական է, քանի որ 2020 թվականի քառասունչորսօրյա պատերազմի հետևանքները էականորեն փոխել են ՀՀ անվտանգային միջավայրը՝ առաջացնելով անվտանգային ճարտարապետության խորը ճգնաժամ: Ղարաբաղյան պատերազմից հետո Ադրբեջանի հետ առաջացած ուժային անհավասարաչափությունը, սահմանային նոր բնագծերը, Հայաստանի և Արցախի

հանրապետությունների խաթարված անվտանգության համակարգերը, Ադրբեջանի սանձազերծած սահմանային ագրեսիան, սպառազինությունների մրցավազքն ու ռազմատենչ հռետորաբանությունը ստեղծում են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության նոր սպառնալիքներ: Արդյունքում անհրաժեշտություն է առաջանում էապես վերանայելու ՀՀ պաշտպանական քաղաքականությունը, այդ թվում՝ միջազգային համագործակցության առումով, հաշվի առնելու հետպատերազմյան նոր ստատուս քվոյով պայմանավորված իրողությունները՝ դրանով իսկ հրատապ և արդիական դարձնելով նման թեմայով գիտական ուսումնասիրությունների իրականացումը:

Ներկայիս աշխարհաքաղաքական զարգացումները և մարտահրավերները նույնպես պահանջում են պաշտպանական քաղաքականության ամբողջական ու հետևողական վերլուծություն: 2022 թվականի փետրվարից սկսված ռուս-ուկրաինական հակամարտությամբ նշմարվող նոր աշխարհակարգի ուրվագծերը Հայաստանի Հանրապետության համար լրացուցիչ մարտահրավերներ են ստեղծում, քանի որ ուժային կենտրոնները, ձևավորելով գլոբալ աշխարհաքաղաքական «խաղի նոր կանոնները», էապես նվազեցնում են փոքր պետությունների մանևրելու հնարավորությունները՝ ազգային էլիտաներին և հասարակություններին պարտադրելով հստակ դիրքորոշում զբաղեցնել աշխարհաքաղաքական կողմնորոշման հարցում:

Ատենախոսության շրջանակներում հեղինակը ներկայացնում է ընդհանուր ուսումնասիրություններ ատենախոսության թեմայի վերաբերյալ, տալիս է գնահատականներ վերլուծությունների և նկարագրությունների ձևով:

Ատենախոսության նպատակն է համակողմանի ուսումնասիրել «արտաքին ռազմական քաղաքականության» դերը ՀՀ անվտանգության ապահովման հարցում, բացահայտել Հայաստանի Հանրապետության պաշտպանական քաղաքականության առանձնահատկություններն ու գնահատել դրա զարգացման հետագա ուղղությունները: Այդ համատեքստում հեղինակն ուսումնասիրել է պաշտպանական քաղաքականության ինստիտուցիոնալացման որոշ գործընթացներ: Միևնույն ժամանակ հեղինակը վերլուծել է պաշտպանական

քաղաքականության ժամանակակից ընկալումներն ու մոտեցումները, առանձնացրել երկկողմ և բազմակողմ ռազմական համագործակցության գործառույթները ՀՀ անվտանգության ամրապնդման համատեքստում:

Հեղինակը կատարել է ինքնուրույն աշխատանք, դրսևորելով գիտահետազոտական աշխատանքի համար անհրաժեշտ որոշակի հմտություններ: Աշխատանքը պարունակում է առաջարկված խնդիրների որոշակի լուծում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ ինը ենթագլուխներով, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության եզրահանգումները կարող են օգտակար լինել հետագա ուսումնասիրությունների համար: Հետազոտության արդյունքում ստացած եզրահանգումները, հետևություններն ու ընհանրացումները ունեն որոշակի տեսական և կիրառական արժեք: Ատենախոսության սեղմագիրը հիմնականում համապատասխանում է ատենախոսության հիմնական օրինակի բովանդակությանը (սեղմագրում բացակայում է թեմայի մշակվածությունը և ատենախոսության մեթոդաբանական հիմքը, ինչպես նաև՝ ձևակերպված հետազոտական խնդիրներից երկուսը):

Հարկ ենք համարում նշել աշխատության հետևյալ թերությունները.

1. Ատենախոսության առանցքային հասկացությունը «արտաքին ռազմական քաղաքականություն» հասկացությունն է: Սակայն նման տերմին փաստորեն չի շրջանառվում գիտական գրականության մեջ: Հետևաբար, հեղինակը նոր տերմին է դնում գիտական շրջանառության մեջ, ինչը պետք է ենթադրեր դրա բովանդակության և ծավալի մանրակրկիտ բացում, որի միջոցով կհիմնավորվեր նոր հասկացության կիրառման անհրաժեշտությունը: Սակայն հեղինակն իրականում այս հասկացության նույնիսկ հստակ սահմանում չի տալիս: Նա ընդհամենը նշում է, որ «ռազմական քաղաքականությունն ունի երկու կողմ՝ արտաքին և ներքին» (էջ 19): «Ռազմական քաղաքականության արտաքին կողմը» և «արտաքին ռազմական քաղաքականություն» հասկացությունները նույնական չեն: Հեղինակը պնդում է, որ «արտաքին կողմը դիտարկում է միջպետական

հարաբերություններում ռազմական ուժի գործադրման խնդիրները» (էջ 19): Սույն դատողությունն ինքնին վիճահարույց է, սակայն, եթե նույնիսկ այն համարենք ընդունելի, ապա կստացվի, որ ատենախոսի հետագա շարադրանքը շեղվում է այս սահմանումից, քանի որ նա խոսում է ռազմական դաշինքների և առանձին պետությունների հետ ՀՀ համագործակցության և ռազմաքաղաքական կապերի, այլ ոչ «միջպետական հարաբերություններում ռազմական ուժի գործադրման» մասին: Անորոշ հասկացության կիրառումը, հեղինակի կողմից այդ հասկացության տրված բովանդակության և շարադրանքի անհամապատասխանությունը հանգեցնում են ողջ աշխատանքի անորոշությանը և ֆրագմենտարությանը: Մեր կարծիքով, շարադրված նյութին համարժեք կլիներ, եթե թեման ձևակերպվեր **«Արտաքին ռազմաքաղաքական համագործակցությունը ՀՀ ազգային անվտանգության ապահովման համատեքստում»** կամ **«Միջազգային ռազմաքաղաքական համագործակցությունն իբրև ՀՀ պաշտպանական քաղաքականության բաղկացուցիչ»**:

2. Ատենախոսության թեմայի մշակվածությունը ներկայացնելիս, ատենախոսը վիթխարի քանակությամբ աղբյուրներ է նշում, սակայն դրանց մեծ մասը, մեր կարծիքով, թեմայի հետ կապված է անուղղակիորեն:

3. Ձևակերպելով ատենախոսության հետազոտական խնդիրները, հետազոտողն իբրև ամենավերջին խնդիր նշում է հետևյալը. «վեր հանել Հայաստանի համար նշանակություն ունեցող տարածաշրջանային և միջազգային զարգացումները» (էջ 11): Նման հարցի ձևակերպումն իբրև վերջին խնդիր, որը պետք է լինի աշխատության տրամաբանական ավարտը կոռեկտ չէ: Նշենք, որ այս խնդիրը սեղմագրում բացակայում է, ինչպես նաև՝ չորրորդ խնդիրը:

3. Ատենախոսի պնդումը, որ «ատենախոսության տեսական հիմքը կառուցված է ՀՀ Սահմանադրության, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության, ՀՀ ռազմական դոկտրինի» և այլ պաշտոնական փաստաթղթերի, ինչպես նաև «տեղական և միջազգային կազմակերպությունների զեկույցների, պետական պաշտոնյաների ելույթների, ԶԼՄ-ներում առկա

վերլուծությունների» և այլ աղբյուրների հիման վրա (էջ 11-12), վկայում է այն մասին, որ նա լավ չի պատկերացնում՝ ինչ բան է «տեսական հիմք»:

4. Ատենախոսության առաջին գլուխը՝ հատկապես երկրորդ և երրորդ ենթագլուխները, անուղղակի են կապված ատենախոսության թեմայի և երկրորդ ու երրորդ գլուխների բովանդակության հետ: Մասնավորապես, այդքան էլ պարզ չէ՝ ինչու է հեղինակը բավականին մանրամասն անդրադառնում որոշ պետությունների ռազմական քաղաքականության նկարագրմանը (ՌԴ, ԱՄՆ): Կամ ինչու է վերլուծում հենց Սինգապուրի օրինակը, այլ ոչ Իսրայելի:

5. Ատենախոսության մեջ երբեմն առկա են անհասկանալի, ոչ կոռեկտ, երբեմն կասկածելի արտահայտություններ և պնդումներ: Օրինակ՝ «ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարների դիսկուրս» (էջ 14), «Հայաստանի ռազմական քաղաքականությունը կոչված է ապահովելու երկրի ռազմական անվտանգությունը՝ **ներքին** և արտաքին թշնամիներից» (էջ 19), «ՀՀ արտաքին ռազմական քաղաքականությունը իրականացվում է երկու մակարդակներում՝ **միջազգային և տարածաշրջանային**» (էջ 20) և այլն:

6. Սեղմագրի վերաբերյալ նշենք նաև հետևյալ դիտողությունները.

ա/ Ատենախոսության ներածական մասում ձևակերպված են «թեմայի մշակվածության աստիճանը» և «ատենախոսության մեթոդաբանական հիմքը», իսկ սեղմագրում դրանք բացակայում են;

բ/ ռուսերեն ամփոփումը լուրջ խմբագրման կարիք ունի:

Հայ-Ռուսական համալսարանի «Քաղաքագիտության» ամբիոնը որպես առաջատար կազմակերպություն գտնում է, որ **Անժելա Սուրենի Մնացականյանի «ՀՀ արտաքին ռազմական քաղաքականությունն անվտանգության ապահովման համատեքստում»** թեմայով ատենախոսությունն ընդհանուր առմամբ համապատասխանում է **ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ»** մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ատենախոսություններին առաջադրվող պահանջներին և այն երաշխավորվում է

հրապարակային պաշտպանության, իսկ ատենախոսն արժանի է հայցվող գիտական աստիճանին միայն նշված դիտողություններին (հատկապես առաջին կետին) փաստարկված և սպառիչ պատասխանի դեպքում:

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
Քաղաքագիտության ամբիոնի վարիչ
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ /Հ. Լ. Սարգսյան/

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Լ. Սարգսյանի
ստորագրությունը հաստատում եմ
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

Գիտական քարտուղար
Բանասիրական գիտությունների թեկնածու Ռ. Կասաբաբովա